№ 133 Սեպտեմբերի 20 Երեքշաբթի 1883 Սեպտեմբերի 20 Երեքշաբթի № 133

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ղզլարից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նաւթային գործը Ամերիկայում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Սեպտեմբերի 13-ին

Այս օրերումս այգետէրերը ամբողջապէս տեղափոխվեցին այգիները, որ ներկայ լինեն այգեքաղուածքեանը։ Շատերը նոցանից վաղուց արդէն համոզված լինելով, թէ հաղիւ կարող են ստանալ անցեալ տարվայ տասներորդ մասն անգամ, տեղափոխվում են, ինչպէս որ իրանք ասում են, նորա համար միայն, որ չը զուրս գան ընդհանուրի կարգից։ Չը նայելով գինու այս տարվայ սակաւութեանը, խիստ մեծ վարձեր են ստանում գործաւորները։ Հարուստները դրամի լիութիւն զգալով, խիստ մեծ իրաւունքներ են տալիս իրանց հրամանակատարներին, ինչպէս որ այստեղ անուանում են թամադեքին, որոնք մշականոցի հրապարակում կանգնած ու ծխաքարշը ձեռքերում սեղմելով, երևակայում են թէ իրանք համալսարանից աւարտած այգեպաններ են, իսկ եթէ մի երկու խօսք խօսէք նոցա հետ այգիների մասին կը համոզվէք որ ոչինչ չը գիտեն։ Մշակ վարձելու ժամանակ իւրաքանչիւրը նոցանից, որպէս զի ամբոխի ուշադրութիւնը իր վրա դարձնէ և ցոյց տայ թէ անսահման իրաւունք ունի ստացած իր պարոնից, աւելացնում է վարձերը. մի քանիսը նոցանից զինեատանը մի փոքր, բայց քաղցր ժամանակ անցուցանելուց յետոյ, դուրս են գալիս հրապարակ վարդագոյն երեսով (այդ օրինած ըմպելիքի այդ յատկութիւնն է գովելի, որ որքան էլ Ղզլարի ճախճախուտ օդը երեսի գոյնը տարած լինի, այդ գինուց մի երկու բաժակ ըմպելուց յետոյ, կարծես թէ մարդուն մի աքանչելի կարմրութիւն է պարգևում) և գինու գոլորշիների ազդեցութեան տակ լինելով անօրէն վարձեր են առաջարկում գործաւորներին։ Թամադեքի միմիանց հետ ունեցած թշնամութիւնից և մի քանի այլ հանգամանքներից շատ վնասներ են կրում չքաւոր այգետէրերը, որոնք՝ դրամի պակասութիւն զգալով, ստիպված են լինում գնալ մեծատունների մօտ փող ուզել ու իրանց գինին յայտնի գներից պակաս գնով վաճառել։ Գինու այդ սակաւութիւնը դարձել է խօսակցութեան առարկայ ամբողջ քաղաքի բնակիչների համար։ Շատերը նոցանից խօսելով այդ բանի վրա, անիծում են իրանց պապերին, ասելով. «դա էլ մուլք ա որ մեզ համար թողել են», և դարձեալ ընկղմվում են մտածութեան մէջ, հոգալով իրանց ապագայի մասին։

Այս տարվայ գինու սակաւաչահութեան հետևանքը այն կը լինի, որ ձմեռվայ երկարատև գիշերները, երբ հարուստ տանուտէրները կլուրում զայրացած նստած կը լինեն թուղթ խաղալու սեղանի առաջ, իսկ տանտիկինները, տուն ու տեղը թողած օրհասի կամքին ու իրանք չքեղ հագուստներով զարդարված ու մուզիկայի ձայնով զրաված պարելու կը լինեն կաղրիլ, պոլկա և ուրիշ տեսակ պարեր, չքաւոր ու աղքատացած ժողովուրդը օգուտ քաղելով այդ դէպքից կը սկսէ այցելութիւն անել քաղաքին, ու ձի գոզանալով, կոզվէք կոտրելով և այլ տեսակ հնարներով փող կը վաստակէ գնելու իր առօրեայ հացը։

Ուրեմն պէտք է նախազգուշութեան ամենայն հնարներով պատրաստվել հանդիպելու այդ չարագուշակ ձմրան։

Բ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

II.

Standard-oil-ընկերութեան զարգացման և նրա կացութեան այդ մի քանի տեղեկութիւններն *) յայտնվում են առաջին անգամ Railroad Investigation-ում։ Երկաթուղիների վրա այս քննութեանը ձեռնամուխ էր եղել 1879 թվին Նիւ-Յորկ նահանգի օրէնսդրական ժողովը, որը, ընտրելով իր միջից առանձին մասնաժողով, յանձնարարում է նրան քննել երկաթուղիների զեղծումները, որոնց նշոյլները երևում են նահանգի երկաթուղիների գործունէութեան մէջ։ Ամենակարող երկաթուղիների դէմ՝ վաճառականական և արդիւնաբերական դասի անդուլ և անդադար բողոքների առաջին շօշափելի հետևանքն է լինում այդ վճիռը։ Մեզ շատ հեռի կարող էր տանել, եթէ սկսէինք մի առ մի պատմելու մասնաժողովի մէջ յայտ եկած երկաթուղիների զեղծումները, և մատնացոյց անելով այս քննութիւնը, ուզում ենք միայն փարատել ընթերցողի կասկածանքը Դր Լէյնի յօդուածի աղբիւրների վերաբերութեամբ. նրա աղբիւրները յենվում են անմիջապէս այդ մասնաժողովի աշխատութիւններին։ Standard-ընկերութեան կատարած գործերը բանին տեղեակ չեղող ընթերցողին բոլորովին առասպելական կարող են երևալ, մինչդեռ իրողութիւններ են նրանք, հաստատված թէ ատենական դատաքննութեանց և թէ զրականական ճանապարհներով։ Կասկածանք տեղի չը պիտի ունենայ այսպէս միշտ, այդ ժողովը լինելու է Թիֆլիսի «Գիւղատնտեսական» ընկերութեան բնակարանում։ «Մշակի» վերջին երեսի վրա երկու անգամ տպված էր յիշեալ ընկերութեան յայտարարութիւնը այսօր լինելի ընդհանուր ժողովի մասին։

—

Սեպտեմբերի 17-ին, շաբաթ օր, ֆրանսիական խումբը կրկին մի ներկայացում տուեց Արծրունու թատրոնում։ Թատրոնը գրեթէ լի էր Թիֆլիսի ամենաընտիր հասարակութեամբ։

—

Ինչպէս հաղորդել է հեռագիրը, Ցուրգենեվի մարմինը կուղարկվի Փարիզից միայն սեպտեմբերի 19-ին և մի ամբողջ շաբաթ ճանապարհում կը մնայ։ Ուրեմն հանգուցեալի դագաղը սեպտեմբերի 26-ից վաղ չի հասնի Ս. Պետերբուրգ։

—

Լսում ենք որ Վանի ռուսաց հիւպատոս, պ. Կամսարական, իր ծառայութեան տեղը, Վան, վերադառնալուց առաջ, կանցկացնի մի քանի ժամանակ իր հայրենիքում, Նուխի քաղաքում։

—

Պ. Դանիէլ Ղազանց ուղարկել է մեզ ԲԱԳՈՒԻՑ հետևեալը տպելու համար։ «Խնդրում եմ յայտնել ձեր լրագրում, որ իմ չլինած քարեայ պատմական արձանը, որ ներկայացնում է Արտաշէսին և Սաթինիկին, վիճակախաղ է դրվում։ Գոյացած գումարի մի մասը յատկացվելու է բարեգործական նպատակով։ Տոմսակի գինը 1 ռուբլ է։ Բաղուի մէջ ստորագրվել կարելի է հետևեալ խանութներում. պ. Գ. Թումայեանցի, պ. Սարգսեանցի, պ. Ադամեանցի և պ. Ղազանցի մօտ։ Նոյն տեղերում կարելի է տեսնել և արձանի ֆոտոգրաֆիական պատկերը, իսկ իմ խանութում (Ղազանցի մօտ), նոյն իսկ արձանը կարելի է տեսնել։»

—

Լսում ենք որ Թիֆլիսի Ներսիսեան ազգային-հոգևոր դպրանոցի հոգաբարձութիւնը նորերումս գնեց 50 հազար ռուբլ գումարով դպրանոցի շի-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱ գիւղից մեզ գրում են որ անցեալ շաբաթում Մեծ-Ղարաբլիսային մօտիկ թուրք գիւղում մի քանի մարդասպանութիւններ եղան։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են։ «Ինչպէս յայտնի է երկաթուղու կայարանը չլինված է երկու վերստ հեռու Գանձակ քաղաքից։ Կայարանի չորս կողմը արդէն սկսում են տներ շինվել, այնպէս որ քաղաքը ժամանակով կընդարձակվի մինչև կայարանը։ Բայց շատ լաւ կը լինէր եթէ հին քաղաքի կենտրոնից մինչև երկաթուղու կայարանը ձիաքաշ երկաթուղի չլինէին։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են։ «Ասում են որ Էջմիածնի վանքը հետևեալ տարին այլ ևս միջոց չի ունենայ Գէորգեան ճեմարանի բէկտորին և պրոֆէսորներին առաջվայ ռոճիկները տալու։ Բայց ինչ և իցէ մինչև պայմանագրի վերջանալը վանքը ստիպված կը լինի նոյն ռոճիկները տալ պ. պ. բէկտորին և պրոֆէսորներին, եթէ ոչ նրանք անմիջապէս կը թողնեն իրանց պաշտօնները և չեն համաձայնվի ամենափոքր զիջումն անել վանքին։ Պարոնները որքան կարողացան ձեռք գցեցին եկեղեցու փողերից, իսկ եթէ ռոճիկները նրանց պակասեցնեն, նրանք անմիջապէս կը հեռանան ճեմարանից, երեսի վրա կը թողնեն ճեմարանը։ Շատ բան փողի համար է մեզանում։»

—

ՕՐԷՕԼ քաղաքը, որ ինչպէս յայտնի է, երևելի ռուս բանաստեղծ-ռոմանիստ Ցուրգենեվի հայրենիքն է, դիտաւորութիւն ունի, ինչպէս հաղորդում են այժմ մայրաքաղաքի լրագիրները, արձան կանգնեցնել իր երևելի համաքաղաքացուն։

—

Այսօր, երեքշաբթի օր, սեպտեմբերի 20-ին, լինելու է «Կենդանիների հովանաւորութեան» ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։ Ինչ-

---

տեղ... Նաւթային այդ «ընկերութեան» մենաւաճառութիւնը, նրա յարաբերութիւնները երկաթուղիների հետ, երկաթուղիների նպաստաւոր գործակցութիւնը նաւթային մենաւաճառութեան համար—այդ փոխադարձ ջանադիր ձգտումների ունեցած ազդեցութիւնը վաճառականութեան և շահեստից վրա՝ մատնացոյց արած՝ քննիչ մասնաժողովի ուսումնասիրութեան առանձին ուշադրելի առարկան է եղել։ Վաճառականութեան և շահեստից ներկայացուցիչները, համոզված լինելով՝ որ բանը եկել է ամերիկացի վաճառականական կեանքի ամենապիկար կէտին, ամենայն ջանք են դնում՝ որ լոյս ձգեն այս ամբողջ գործի վրա և գէթ՝ խեղք հասցնեն նրա մեքենայութիւններին, յայտ բերեն նրա կացութեան ճշգրիտ պատկերը։ Սակայն հարկաւոր է ասել և այն, որ նրանք չը կարողացան իսպառ թափանցել այդ՝ իր տեսակի մէջ՝ երևելի ձեռնարկութիւնը, վասն զի «ընկերութեան» գլխաւոր կառավարիչները հրաժարվում են միանգամայն հարցափորձի ենթարկվել, զգաստանալով, որ չը լինի թէ իրանց տալիք պատասխանները վնասեն «ընկերութեան» գործին։ Այնու ամենայնիւ ինչ որ էլ իմացվում է բաւականին հետաքրքիր է...

Standard-oil-ընկերութիւնը հէնց որ իր մեծագործութիւնները վերջացնում է գործարանների և նաւթանցքերի հետ, երախտամոռաց գտնվելով դէպի երկաթուղիները, պատերազմ է յայտնում սրանց և ահա թէ ինչ առիթով։ Հարկաւոր է իմանալ, որ Ամերիկայի երկաթուղիները բեռնակրութեան ամեն գործողութիւնները իրանք չեն կատարում, այլ թողնում են բեռնակրութեան մի քանի օպերացիաները համապատասխանող ընկերութեանց գործունէութեանը։ 1877 թվին նաւթային գաւառում գործում էր այդպիսի ընկերութիւններից մէկը, որը կրում էր Empire-Transportation—C-ny անունը։ Այդ Transportation ընկերութիւնը ունէր հաղարի մօտ նաւթակրակառքեր և 400-ի մօտ հասարակ կառքեր կերօսինի համար։ Այս ամեն կառքերը նա բանեցնում էր Պենսիլվանիա—կենտրոնական երկաթուղու վրա։ Բայց յայտնենք՝ նա մասնակցութիւն ունէր նաւթանցքերի ձեռնարկութեանց մէջ։ Նաւթային գործում նրա ամբողջ գործունէութիւնը կայանում էր նրանում, որ նա իր վագոնները վարձով էր տալիս յիշեալ երկաթուղուն, կամ գործարանների ու նաւթահորերի յանձնարարութիւններն էր կատարում բեռնակրութեան նկատմամբ, որպէս միջնորդ։ Ցեսնես Standard-oil-ընկերութեան դափնեայ պսակները նրան դադար չէին տալիս, կամ ուրիշ պատճառներով, միայն թէ՝ վերը նշանակած թուականում նա սկսում է ընդարձակել իր գործերը, հիմնելով Ֆիլադելֆիայում իր սեփական գործարանները։ Ահա նոյն իսկ այդ հանգամանքը Standard-ի համար մատի փաթաթան է լինում որ սկսի կռիւը Պենսիլվանեան երկաթուղու հետ։ Մարտին թէ ապրիլին նա դադարեցնում է ուղարկելու իր բեռները այս ճանապարհով. մի տակառ նաւթ անգամ չէ տալիս նրան։ Նաւթային իշխանները բոլորովին զժուարութիւն չեն կրում այսքան կասկածաւոր յարաբերութիւն ցոյց տալու այն երկաթուղուն, որի հետ բարեկամութիւն էին անում մինչև այժմ։ Երկաթուղու տրտունջներին պատասխանում թէ՝ նա նախազգաստ է Transpor.-ընկերութիւնը կառքեր հատուցանելու միջոցում, մինչդեռ ինքը՝ Standard-ընկերութիւնը կարօտութիւն է կրում այդ կառքերի մէջ, թէ՝ Transpor. ընկերութեան համար աւելի փոքր սակագին է նշանակած քան թէ իր համար... միով բանիւ թէ՝ նրանք չեն ուզում գործ ունենալ այն երկաթուղու հետ, որը նպաստում է օտար գործարանների մրցութեանը ի վնաս Standard-ի գործարաններին։ Երկաթուղին աշխատում էր ջրել այդ ամեն կշտամբանքը, նա պատրաստութիւն էր յայտնում օգնել Standard-ընկերութեանը գործարանական շահեստի կազմակերպութեան փոփոխման մէջ, յանձն է առնում միջնորդել վարձու առնելու նրա համար Transportation ընկ. գործարանները... Մենաւաճառները ոչինչ չէին ուզում լսել. նրանք կռիւ էին որոնում ու գտան... Բայց որովհետև երկաթուղին էլ իր կողմից ցանկութիւն չունէր ստորադրվել—ահա այստեղից ըսկսում է սակարկի կամակոր մրցումը, որը տևում է մինչև 17-ն հոկտեմբերի։ Երկաթուղին իր ամենայն ջանքն էր թափում դէպի իրան քաշելու այն ամեն նաւթը, որը դեռ ևս կախում չունէր Standard-oil-ընկերութիւնից, նա նշանաւոր վնասներ էր վիզը առնում. պատահում էր որ ապրանքատէրերին յետ դարձնելի գումարը աւելի մեծ էր լինում, քան թէ բեռնակրութեան վարձը։ «Ես մտաբերում եմ, պատմել է քննիչ մասնաժողովին Պենսիլվանեան-կենտրոնական երկաթուղու ներկայացուցիչը,—երբ մենք բեռնակրում էինք պ. Օլենի նաւթը Նիւ-Յորկ, 8 ցենտ աւելացնելով...» Բանը նրանումն է, որ երկաթուղին, նաւթ ստանալու համար, յանձն էր առնում տալ ապրանքատէրերին նաւթի գների մէջ եղած այն զանազանութիւնը, որ երբեմն տեղի էր ունենում նաւթի գների մէջ նաւթային գաւառում և Ֆիլադելֆիայի, Նիւ-Յորկի և Բօլտիմորի գործարաններում։ Եւ որովհետև Standard-ընկերութիւնը տիրապետում էր արդէն շուկայի վրա, նա գործը այնպէս էր տանում, որ երբ Պենսիլվանեան երկաթուղով մեծ քանակի նաւթ պիտի ստացվեր գործարաններում, նոյն իսկ միջոցում նաւթի գինը իսկոյն ցածրանում էր, այնպէս որ՝ նաւթը գործարաններում էժան էր, քան հորերի մօտ, և երկաթուղին կամայ ակամայ պիտի վճարէր ապրանքատէրերին

*) «Մշակ» № 114

նութեանը կից պ. Շադինովի չինութիւնը, որ և դիտաւորութիւն ունի նորոգել և միացնել այդ տունը դպրոցի հին չինութեան հետ։ Արդեօք յիսուն հազար ռուբլ ծախսելուց յետոյ, հոգաբարձութիւնը այնքան միջոցներ կունենայ Շադինովի չինութիւնը վերանորոգել, քանի որ այդ չինութիւնը բաւական հին է արդէն։

—

ՄԵԾ-ՂԱՐԱՔԼԻՍԱՑԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Թեմական տեսուչ պ. Պռօշեանց պատճառ բռնելով «Մշակի» № 121 մէջ տպված նամակը և վերագրելով այս նամակը ուսուցիչ Սարիբէգ Տէր-Մէլքիսեդեկեանցին, սեպտեմբերի 15-ին հեռացրեց այդ ուսուցչին իր պաշտօնից։ Այսպիսով ողորմելի ուսուցիչը այս տարի անգործ կը մնայ, որովհետև դպրոցները բոլորն էլ վարձել են իրանց վարժապետներին։»

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Կարապետ Մատինեանցի փոքրիկ ոտանաւորների ժողովածու, «Հայելի» վերնագրով։ Այդ ոտանաւորները գրված են թատրոնական բեմից կարդացվելու կամ կուպլետների պէս երգվելու համար։ Այդ նպատակին ծառայելու համար նրանք բաւական աջող են։ Գրքոյկը տպված է Թիֆլիսում, Մարտիրոսեանցի տպարանում և արժէ 40 կոպէկ։

—

ՄԵԾ-ՂԱՐԱՔԼԻՍԱՑԻՑ մեզ գրում են։ «Շուտով կը սկսվի նոր տանուտէրի ընտրութիւնը։ Հրաւիրում ենք հասարակութեան ուշադրութիւնը այս ամենակարևոր գործի վրա։ Թող լաւ մտածեն և հեռատեսութեամբ գործեն, թող աչքերը բաց անեն և մարդկերանց լաւ ճանաչեն։ Ղարաքլիսա գիւղին հարկաւոր է ուսումնասէր, փորձված, գործունեայ և անաչառ մարդ տանուտէրի պաշտօնում։ Հասարակութիւնը տանուտէր ընտրելիս պէտք է ընդհանրութեան օգուտը աչքի առջև ունենայ, պէտք է բարեկամութեան և ազգականութեան նշանակութիւն չը տայ։ Ահա, մեր կարծիքով, որոնք տանուտէրութեան արժանի մարդիկ են. 1) Փաշա Հայրապետեան, 2) Աւետիս Միրզայեանց, 3) Եագօր Իսահակեանց, 4) Երեմիա Նալբանդեանց, 5) Գէորգ Տէր-Պետրոսեանց, 6) Մովսէս Փաշինեանց, 7) Յովհաննէս Փաշինեանց և 8) Ալէքսանդր Փալանդուզեանց։ Մեծ-Ղարաքլիսայի յարգելի հասարակութիւնը սրանցից որին և ընտրի, չի սխալվի։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ուսուցիչների ճաշկերոյթի ժամանակ Մոնբրէն-լը-Սէնի մէջ, Ֆրանսիայում, պատգամաւոր Բիշար մի ճառ արտասանեց, որով ի միջի այլոց ասեց. «Բոլոր ժամանակներում իրանց խելքի և հանճարի ոյժով երևելի մարդիկ աշխատել են ժողովրդի մէջ տարածել մարդկային գիտութեան տարրերը, որոնց մենք անուանում ենք տարրական ուսում։ Նրանք այնքան հաւատում էին այդ հարցի նշանակութեանը, որ նրանցից մէկը, երևելի Լէյբնից մի անգամ ասեց. «Թող ինձ յանձնեն երկու սերունդների կրթութիւնը և ես երկրի տիրողը կը դառնամ։» Գեղեցիկ խօսքեր են, որ ես կրկնում եմ յարգելի ուսուցիչների առաջ։ Առաջվայ ժամանակներում ուսումնարանները հազուագիւտ էին և յանձնված էին կամ ազատ ուսուցիչներին և կամ նոյնքան ազատ հոգևորականներին։ Մեր յեղափոխական ժողովները 89 թուականից եռանդով զբաղվել են ժողովրդական կրթութեան գործով։ Բայց պատերազմը և Եւրոպայի համաձայնութիւնը արգելք դրին նրանց նախագծերի իրագործմանը։ Առաջին կայսրութեան ժամանակ Նապոլէօն աշխատում էր զինուորներ պատրաստել և ոչ թէ քաղաքացիներ։ Թագաւորութիւնը չէր կամենում ուսում տարածել, նրան բոլոր չարիքների պատճառը համարելով։ Ինչ կը վերարերի երկրորդ կայսրութեանը, նա այնքան վատ ծագումն ունէր, որ չէր կարող առաջ մղել այնպիսի ազնիւ գործ, ինչպէս ժողովրդական կրթութեան գործն է։ Հաստատվեցաւ հանրապետութիւնը և առաջին օրից ինչն էր նրա մշտական և բացառական հոգը։ Արդեօք թշնամիների հալածելը։ Արդեօք բռնութիւնը նրանց ընկճելու համար։ Ոչ, նրա ամենամեծ հոգն էր ամեն տեղ լոյս տարածել, ուսումնարաններ հիմնել մինչև անգամ ամենափոքր գիւղերի մէջ, բարձրացնել ուսուցչի նշանակութիւնը, նրա ռոճիկը նրա նիւթական պահանջների համեմատ նշանակել։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը, որ մի ժամանակ ամենաանշանն էր համարվում, այժմ ամենամեծ բիւդժետ ունի և առաջին մինիստր է համարվում։ Ուրեմն սիրով և յարգանքով վերաբերվենք կառավարութեանը, որի ամենագլխաւոր գործը ժողովրդական լուսաւորութիւնն է։»

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԼԻՍԱՑԻՑ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ Պ. ՊՌՕՇԵԱՆՑԻՆ

—

Ես տեսնում եմ որ աւելի լաւ է պարզ ստորագրութեամբ խօսել ձեզ հետ, քան կեղծ, որովհետև դուք ամեն դէպքում ինձ էք հալածում և աշխատում էք ինձանից վրէժխնդիր լինելու։ Ես կը խօսեմ ձեզ հետ ամենայն ճշմարտութեամբ, իսկ ընթերցող հասարակութիւնը թող լսի և դատի յանցաւորին։

«Մշակի» 121 համարի Ղարաքլիսայի ճշմարտապատում նամակը, ինչպէս երևումէ, շատ վատ է ազդել ձեզ վրա, սաստիկ գրգռել է ձեր ինքնասիրութիւնը։ Դուք ճանաչելով ինձ նամակի հեղինակ, սկսել էք ձեր թշնամութիւնը ծայրայեղութեան հասցնել, ամեն ջանք թափում էք որ ձեր վրէժը յագեցնէք, ձեր կրքերին բաւականութիւն տաք։ Ձեր բարկութիւնը աւելի սաստկացնելու համար ես կը շարունակեմ «Մշակի» 121 №-ում հրատարակված նամակի կիսատը։

Դուք, պ. Պռօշեանց, ամենևին իրաւունք չունէիք հրամայելու իմ կնոջը, ձեր զանազան հաղուստեղէնները կարել տալու։ Այո, իրաւունք չունէիք, բայց ապօրինաբար հրամայում էիք. «այս էլ կարիր, այն էլ կարիր, շուտ արա վերջացրու»։ Երբ իմ կինը, զզուելով ձեր կարերից, իր օրինաւոր պատճառները առաջ բերելով, խնդրում էր ձեզ հանդիստ թողնել իրան, դուք դարձեալ ձեր տեսչական բարձրութիւնից ուղղակի գոռալով հրամայում էիք. «տիկին, ես ձեզ ասում եմ (այս ձեր իսկական բառերն են) որ ձեր գործերը թողէք և մինչև առաւօտ շալվարս կարէք, հասցրէք, որ պէտք է գիւղերը գնամ»։ Մինչև հիմա կինս իմ ազգեցութեան տակ ակամայ համբերել էր ձեր կոպիտ վարմունքներին, բայց այժմ, երբ դուք ամեն տեսակ քաղաքավարութիւն ոտքի տակ դնելով, ձեր շալվարն էլ առաջարկեցիք կարելու, նա էլ ազատ պատասխանեց որ «ես քո շալվար կարողը չեմ։» Կնոջս այս իրաւացի պատասխանը ձեզ շատ վիրաւորեց։ Շատ ցաւում եմ որ դուք քաղաքավարութեան ամենահասարակ կանոններին անգամ ծանօթ չէք։ Ինչպէս որ ես իրաւունք չունեմ իմ շալվարը ձեր կնոջը կարել տալու, այնպէս և դուք իրաւունք չունէք։

Սրանից յետոյ դպրոցի պարտիզպանները ձեր հաւի մէկի ոտը կոտրել էին. դուք, համոզված լինելով որ այդ անփոխարինելի դժբաղդութիւնը մեր խորհրդով են ձեզ հասցրել, յանկարծ անագին աղմուկ բարձրացրիք, «հայ, հոյ, էյ» հաւիս ոտը կոտրել էք։ Այս չնչին բանի համար այնպիսի ծանր խօսքեր արձակեցիք ձեր բերանից դէպի կինս, որ ես քիչ մնաց հաշտարար դատարանը դիմէի և իմ պատիւը պահանջէի։ Դուք ձեր այդ բարկութեան ժամանակ այնպէս էիք վարվում իմ կնոջ հետ, ինչպէս առհասարակ վարվում էք ձեր լուացարար վանեցի թշուառ Նուպարի հետ։ Լաւ իմանաք, որ մենք ձեր բոլոր անտեղի հրամանները, որ ակամայ կատարում էինք և անտանելի լռութեամբ դիմանում էինք ձեր կոպիտ վարմունքներին, այդ ոչ թէ ձեր թեմական տեսչութիւնից վախեցած էինք, ինչպէս դուք կարծում էք, այլ խռովութեանց տեղիք չը տալու համար։ Բայց երբ դուք «դանակը ոսկորին հասցրիք» մենք էլ ստիպված մեր պատիւը պիտի պահանջէինք։

«Մշակի» 121 №-ի Ղարաքլիսայի նամակի ազդեցութեան տակ, Ալէքսանդրօպոլում, գերապատիւ Սահակ վարդապետի տանը սաստիկ զայրացած պաշտօնական թուղթ էք գրում հոգաբարձութեան, որ ինձ, որպէս վատ ուսուցչի, արձակեն պաշտօնից։ Բայց տեղական ուսուցիչները հասկացնում են ձեզ ձեր սխալը և թուղթը ոչ ընչացնում են։ Դուք, պ. թեմական տեսուչ, ներկայ էիք որ հոգաբարձութիւնը ինձ հետ պայման կապեց և վերջապէս ձեզ յայտնի էր, որ ես դրաւոր դիմեցի հոգաբարձութեան և առաջարկեցի իմ պայմանները, ինչու՞ այդ ժամանակ, քանի որ ես դեռ պայման չէի կապել հոգաբարձութեան հետ, չէիք արձակում պաշտօնից որպէս վատ վարժապետի, այլ այնքան մնացիք որ «Մշակի» 121 №-ը դուրս եկաւ։ Այո, այդ համարը ձեր կիրքը արթնացրեց։ Այժմ պարզ երևում է որ դուք ձեր պաշտօնը ձեր կրքերին էք ծառայեցնում։ Ձեր կիրքը աւելի նախապատիւ էք համարում, քան դպրոցների օգուտը։

Բանից երևում է, որ մի վարժապետ, որքան էլ բարեխիղճ երևի իր պաշտօնի մէջ, նրան դուք պաշտօնազուրկ կանէք, եթէ նա չէ կամեցել կամ ժամանակ չէ ունեցել ձեր շալվարը 6 ժամվայ մէջ կարել վերջացնել, առանց հասկանալու որ այդ վարժապետը վարձված է դպրոցի համար և ոչ թէ թեմական տեսչի շալվարը կարելու համար։ Ա՛խ, այդ անիծած շալվարը մեր գլխին ցաւ դառաւ, այնքան կարերը կարել էինք, եթէ այս էլ կարէինք, արդեօք կազատվէինք, պ. թեմական տեսուչ, ձեր հալածանքներից։

Պ. Պռօշեանց, հոգաբարձական ժողովներից մինում էլ դուք հրամայեցիք մեզ—ուսուցիչներիս, որ այսուհետև մասնաւոր մարդկերանց գեղծումների մասին ոչինչ չը գրենք լրագիրներում, որքան էլ դաքա ինասակար և զարշելի անդամներ լինին հասարակութեան համար, հակառակ դէպքում ենք ամենայն սովորական ճանապարհները դէպի ծով։ Սրանք սկսում են ուղարկել իրանց ապրանքը դէպի արևելեան նաւահանգիստները Բուֆալօ քաղաքի վրայով, որտեղից իրանց նոր շոգենաւերով՝ յարմարեցրած հեղուկ բեռնաբարձմանը՝ ուղարկում են նաւթը նշանակեալ նաւահանգիստները։ Համեմատաբար այս ճանապարհը էժանագին էր՝ միայն թէ մթնոլորտային գործօններից մեծ կախում ունէր. այնպէս որ Standard-ընկերութեան և երկաթուղիների դրութիւնը աւելի գերազանց պիտի համարվէր նրանց վրա։ Բայց այսու ամենայնիւ «ընկերութիւնը» չէ ցանկանում այս տեսակ նաև անկախութեանը համբերատար լինել և ստիպում է երկաթուղիներին սակագնի պատերազմ բանալ ջրանցքների և գետերի բեռնակրութեան հետ, ցածրացնելով իրանց սակագինը 82 ցենտից մինչև 60 ցենտ netto։ Երկաթուղիները խոնարհ ծառաներ են գտնվում, և այսպէս ջրային հաղորդակցութիւնը դադարում է էժանագին լինել։ Ահա այս միջոցով արմատախիլ է լինում և վերջին մրցութիւնը։

Այս հանգամանքներից Standard-Oil-ընկերութիւնը նկատում է որ՝ իր իշխանութիւնը երկաթուղիների վրա աւելի մեծ եղաւ, քան թէ որքան ինքն էր կարծում։ Այս համոզումով նա վճռում է՝ որքան որ կարելի է աւելի օգուտ քաղել իր այդ բարեյաջող կացութիւնից։ Ահա այս դիտմամբ նոր խաղ է խաղում երկաթուղիների դէմին։ Ցանկարծ նոր ուրուական է յայտնվում ասպարիզում, նոր ընկերութիւն, որը իբր թէ ունի երկարաձիգ նաւթանցքեր։ Այս նոր ընկերութիւնը անուանում է իրան American-Transfer-Company, հայերէն՝ Ամերիկական-տեղափոխութեան-ընկերութիւն։ Սա բանակցութիւններ է անում Նիւ-Եորկ-կենտ., Էրիէի և Պենսիլվանեան-կենտ. երկաթուղիների՝ երկի հետ էլ։ Նրանց ամեն մէկին առանձին պատմում է թէ որպիսի նշանաւոր սակագնի զիջումներ է ստացել միւս երկու երկաթուղիներից՝ այն մեծ քանակի ապրանքի համարորք ստանում են երկաթուղիները նրանից, և թէ՝ Նա պատրաստ է համաձայնվել և այդ երկաթուղու հետ էլ, որի հետ այժմ բանակցութիւն է անում, եթէ նա ի հարկէ պակասացնի յայտնի տոկոս սակագնից, միայն թէ՝ «այս բանակցութիւնը գաղտնի պիտի մնայ իրանց մէջ, առաւել ևս՝ միւս երկու երկաթուղիները ոչինչ չը պիտի իմանան այս մասին»։ Երևելին այն է, որ երկաթուղիները այսքան պարզ թակարդով բռնվում են։ Բայց և նրանց արդարանալու միջոցը այն է լինում երևի, որ՝ մի կողմից՝ վախենում էին զրկվել Standard ընկերութեան բարեկամութիւնից, միւս կողմից՝ նոր բեռներ ստանալու փափագը այն բեռնուղարկողից, որին կարելի կը լինի ապագայում յանդիմանել Standard-oil-ընկերութեանը, և վերջապէս՝ նախանձը դէպի միւս երկաթուղիները միանգամայն կուրացրել էր նրանց։ Նրանք առ ոչինչ են դնում վաճառականութեան սովորական զգաստութիւնները։ Նրանք մինչև անգամ չեն ուզում հասու լինել թէ՝ վերջապէս այդ ինչ «տեղափոխութեան» ընկերութիւն է... Ինչ և իցէ, երկաթուղիները 22½ ցենտ զիջումն են անում սրա ամեն մէկ տակառ նաւթի համար։ Նիւ-Եորկ-կենտ. և Էրիէ երկաթուղիների վերաբերութեամբ՝ մատնացոյց արած՝ բանակցութիւնների մանրամասնութիւնները չը յայտնվեցան քննիչ մասնաժողովում։ Այն անձինք, որք կանգնած էին այդ ընկերութիւնների գլխին, ակներև էր՝ իրանց շահի նկատմամբ, աւելի յիմար էին ձևանում՝ քան ինչ որ կային։ Բայց կարելի է, որ նրանք իրանց կատարած բանակցութիւնների միտքն լաւ չէին հասկացել, կամ ամաչում էին խոստովանել իրանց յիմարութիւնը։ Անշուշտ ընթերցողիս հետաքրքիր է իմանալ թէ՝ ով էր այդ նաւթանցքերի քաջաղօր տէրը, որին երկաթուղիները այնքան թանգ էին գնահատում, որ առանց մի որ և է զգուշութեան ընդունում են նրա ամենայն առաջարկութիւնները։ Քննիչ մասնաժողովը բաղդաւորապէս լուծում է այդ խնդիրը։ Հարց ու փորձի ժամանակ Նիւ-Եորկ-կենտ. երկաթուղու ներկայացուցչի բերանից թռչում է թէ՝ նրա ընկերութիւնը ամենայն ըէֆակցիաները արել է ոչ թէ American-Transfer ընկերութեան համար, այլ, որպէս և ուրիշ զիջումները, Standard-ի համար։ Բլանչարի, Էրիէի երկաթուղու ներկայացուցիչը, այդ ցուցումն ջրելու դիտաւորութիւնով յայտնում է թէ՝ իր ընկերութիւնը իսկ՝ զիջումներ է արել միայն այն նաւթի համար, որը ստացվում էր Ամերիկական տեղափոխութեան ընկերութիւնից և թէ՝ ինչ երկայնութեան էին հասնում նրա նաւթանցքերը, երևում է այն քարտէզից, որ ներկայացրել էր ժողովին։ Այդ քարտէզը ժողովում ուշի ուշով քննելուց յետոյ, ահա թէ քանի միջից ինչ է դուրս գալի. քարտէզի վրա նշանակված են եղել բազմաթիւ նաւթանցքեր Բրոդֆորդ գաւառում, սրանց երկու փոքրիկ ճիւղերի վրա գտնում են A. T. C. տառերը։ Առաջին անգամից դիտողը պիտի ընդունէ թէ այդ լայնածաւալ նաւթանցքերի ցանցը պատկանում է American-Transfer-ընկերութեանը։ Բաց յայտնվեցան երկու փոքրիկ ճիւղերը և մնացած ամբողջ ցանցը նկարագրված են եղել երկու՝ միմիանցից դժուար գանազանելի՝ գոյներով։ Երբ Բլանչարին հարց է առաջարկվում թէ՝ ինչ են նշանակում այդ զանազան գոյները, նա պատասխանում է. երևի այդ խողովակները զանազան ժամանակ են կառուցած։ Հետեւեալ օրը նա ուղղում է իր նախկին ցու-

պաշտօնազուրկ կը լինենք: Սարսափելի երկիւղ: Բայց ես համոզված լինելով, որ մասնաւոր մարդկերանց զզուելի գեղծումները և վնասակար գործողութիւնները ընդհանրութեանն են վնասում, մինչև մահ պիտի հարուածեմ այդպիսի ժողովրդի վնասակար ցեցերին, որոնք իրանց գարշելի յատկութիւններով թունաւորումեն ամբողջ մարդկութիւնը և իրանց նմանների թիւը աւելացնում են: Ես պիտի գրեմ ձեր գեղծումները նոյն իսկ թէկուզ այս լոպէիս պաշտօնից արձակէք: Ես հազար անգամ բարձր եմ համարում սովամահ մեռնել, քան մի կաթ հացի համար ձեր կրքերին ծառայել: Դուք, պ. Թեմական տեսուչ, ինչու Ա-լեքսանդրոպօլի ուսուցիչներին էլ չը հրամայեցիք որ այսուհետև մասնաւոր մարդկերանց գեղծումների մասին չը գրեն, ինչու ձեր իրաւունքը միայն խուլ գիւղերումն էք տարածում, ինչու միայն ինձ էք զանազան սպառնալիքներ տալիս. չվարդ չը կարեցինք, նրա համար, հա:

Վերջացնելով մեր արդարացի, հրապարակական բողոքը, որդիական ամենայն խոնարհութեամբ զիմում եմ Էջմիածնի սուրբ սինոդին և խնդրում նրա հայրական անաչառ ուշադրութիւնը ինձ նման անպաշտպան ուսուցիչների վրա, որոնք ի տարապարտուց զոհ են գնում պ. Պռօշեանցի հաշիւներին: Եթէ պ. Պռօշեանցը ամենաչնչին բաների համար այս և այն վարժապետին կարձակէ պաշտօնից, մթթէ սուրբ սինոդը իրաւունք չունի այդպիսի Թեմական տեսչին պաշտօնազուրկ անելու, որ հարիւրաւոր գիւղերի տեղն անգամ չը գիտէ և գնացած տեղերն էլ առանց մի հասարակ օգուտ ցոյց տալու դուրս է եկել: Միւս անգամ մենք չօշափելի փաստերով կապացուցանենք մեր ասածները:

Մեծապատիւ խմբագիր, ես պատասխանատու եմ իմ գրածի ամեն մի տառին, բարեհաճեցէք խնդրեմ պաշտպանել ինձ նման հալածված, անպաշտպան և Թեմական տեսչի կրքերին զոհ գնացած վարժապետներին:

Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 սեպտեմբերի: Ֆինանսների մինիստրից ակցիզային կառավարիչներին տուած շրջաբերականով որոշվում է փորձերի կարգը սօրգօից շաքար պատրաստելու համար, որի արդիւնաբերելը թոյլ է տրվում 1884 թուականից առանց ակցիզի և վկայականի հարկ վճարելու, բացի Ճակնդեղի շաքարի գործարաններից, որտեղ այդպիսի փորձեր թոյլ են տրվում միայն ընդհանուր հիման վրա: Դարսի շրջանի գինուորական նահանգապետ գեներալ-մայոր Գրեսման նշանակված է Թիֆլիսի նահանգապետ: Վճռված է Սեստրօրեցկի գործարանը պետութեանը վերապահել: Ենթադրված է մեծացնել քաղաքային անշարժ կայքերի հարկը Մօսկվայի նահանգում 75%, Բեսարաբիայի, Եկատերինօսլավի, Կիևի, Կովնօի, Կուրսկի, Սամարայի, Խարկովի և Խերսօնի նահանգներում 60%, Կաստրօմայի, Վօրոնէժի, Կալուգայի և Պսկովի նահանգներում 40%, իսկ մնացած նահանգներում 33%:

ՐԻԻԴԵՍՀԷՅՄ, 17 սեպտեմբերի: Երէկ Վիլհելմ կայսրի և բազմաթիւ բարձրաստիճան անձանց ներկայութեամբ կայացաւ Նիդերվալդի մէջ Գերմանիայի հսկայական արձանի բացումը, որը կառուցված է ի պատիւ 1870 թուականի յաղթութեան:

ՎԻՍԲԱԴԵՆ, 17 սեպտեմբերի: Երէկ Նիդերվալդի մէջ արձանի բացման առիթով այստեղ կայացաւ հանդիսաւոր ճաշկերոյթ, որի ժամանակ կայսրի կենացի վրա ճառեր արտասանեցին, որոնց մէջ յիշվում էր, թէ Վիլհելմ կայսրին ամբողջ Գերմանիան պարտական է միութեամբ և ներքին խաղաղութեամբ, իսկ ամբողջ Եւրօպան արտաքին խաղաղութեամբ: Կայսրը պատասխանեց գերմանական բոլոր իշխանների կենացով, որոնք նպաստեցին Գերմանիայի միութեանը:

ՓԱՐԻԶ, 17 սեպտեմբերի: Լուր է տարածված, որ Չինաստանը բացի կարմիր գետի ձախ ափից պահանջում է, որ աջ ափի մի մասն էլ չէզոք մնայ: Լրագիրները ասում են, որ Ֆրանսիան անկարող է ընդունել այնպիսի պայմաններ, որոնք ոչնչացնում են նրա գործած արշաւանքի բոլոր պտուղները:

ԼՕՆԴՕՆ, 17 սեպտեմբերի: Կօրէյին սպանող Օգօնիլ ենթարկված է երդուեալների դատաստանին: Կալուածական յանցանքները՝ նա համարձակ կարող է պնդել թէ՝ ինքը երկրի միակ գործարանատէրը չէ, ահա տեսէք՝ կան և ուրիշները... Standard-ընկերութիւնը հանքատէրերի միայնակ նաւթ գնողն է: Այս հանքատէրերին նա հրամանագրում է նաւթի գները: Միւս կողմից՝ նա միայնակ կէրօսինի համբարապետ է սպառողների համար, որոնց նոյնպէս հրամանագրում է իր պայմանները վաճառելի գների և մթերքի որակութեան նկատմամբ: Ահա այս է Standard-oil-Campany-ի նշանակութիւնը ամերիկական նաւթային գործի մէջ:

Դ-ր-Լէյեն Atlantic Manthly հանդիսի մատնացոյց արած յօդուածից (Story of a Great monopoly) մի քանի օրինակներ է առաջ բերում ցոյց տալու համար թէ «ընկերութիւնը» ամբարտաւան անամօթութիւններ է գործում: Դնենք այստեղ այդ օրինակներից երկուսը:

Հանքատէրերից մէկը, մի ոք, Կամբել, վերադառնալով ճանապարհորդութիւնից իր Պարկէր անուանեալ կալուածքը Պիտսբուրգի արուարձանում, անսովոր վրդովմունքի մէջ է գտնում ամբողջ ազգաբնակութիւնը: Սրան պատմում են թէ Standard-ընկերութիւնը յայտարարել է, որ եթէ նաւթը իրան չը ծախեն, նա այդ նաւթը չը պիտի տեղափոխէ իր խողովակներով և ընդ ամին այնպիսի գին է եղել առաջարկած, որ սակարկութիւնը տակաւին չէր կարող կայանալ: Բայց յետոյ, որովհետև ամեն աւազանները լցվել են և նաւթը հովանաւորելու էլ տեղ չէ մնացել, հանքատէրերը՝ հարկադրված՝ ընդունում են այդ առաջարկած գինը: Standard-ընկերութիւնը հրաժարվում է իր տուած գնից էլ. յայտարարում է թէ այժմ նաւթ առնել նա չէ կարող, որովհետև երկաթուղին պատրաստի կառքեր չունի: Ի հարկէ նրա միակ նպատակն էր նաւթի գինը աւելի ցածրացնել...Հարիւրաւոր հորեր խափանվում են, բազմաթիւ արդիւնաբերողներ սկսում են իրենց նաւթը գետին ածել: Այս հանգամանքը՝ նաւթային շահեստի մէջ ակնկալութիւն ունեցող ժողովրդին միանգամայն խռովայոյզ վրդովմունքի է հասցնում. մոլեգնացած ամբոխը սպառնում է քարոզանդ անել նաւթանցքերը և երկաթուղիները: Կամբել հեռագրում է երկաթուղիներին, որ շուտով նրանք կառքեր հասցնեն, եթէ ոչ բանը հասել է ընդհանուր խռովութեանը և թէ 1877 թվի յուլիսի անցքերը կրկին կարող են տեղի ունենալ... Standard-ընկերութիւնը, որը դեռ ևս լաւ մտքին ունէր այդ անցքի յիշատակը, հասկանում է որ իսպառ համը տարել էր: Այդ հեռագրից յետոյ մի քանի ժամ չէ անցնում, որ Պարկէրում պատրաստի կանգնած էին դատարկ կառքերը: Այն երկաթուղին, որը պնդում էր թէ կառքեր չունի, ամբողջ շաբաթ ամեն օր բեռնակրում էր 50,500 տակառ նաւթ:

Մէկ ուրիշ արդիւնաբերող՝ Լիւիս Էմերի՝ հետեւեալ խօսքերով է նկարագրում Standard-oil-ընկերութեան արարողութիւններն արդիւնաբերողների հետ. «Մենք գնում ենք նրա գրասենեակը, կանգնում ենք շարքով 60—70 հոգի, և շատ տէպ է պատահում, որ մնում ենք կանգնած ամբողջ կէս օր փողոցումը...Երբ որ մէկն ու մէկիս հերթը գալիս է, գնում է նա և խոնարհաբար առաջարկում է իր ապրանքը, այն ժամանակ միայն՝ պատահում է որ՝ գրասենեակը անարգամիծար է լինում նրա հայցուածին...»

Գաս. Ե.

ցումն, յարելով թէ՝ American-Transfer ընկերութեան ամբողջ խողովակների ցանցը կապալով է տուած United-pipe-lines-ին (որի ինչ լինելը արդէն գիտենք) և թէ Transfer-ընկերութիւնը պահել է իր համար այդ երկու փոքրիկ ճիւղերը: Վերջ ի վերջոյ յայտնվում է, որ Transfer-ընկերութիւնը բացի այդ երկու աննշան ճիւղերից երբէք ուրիշ նաւթանցքեր չէ ունեցել, և սրանց էլ կառուցել է ոչ այլ ինչի համար, բայց եթէ լիացնելու Պենսիլվանիա նահանգի օրէնքները, և ակնյայտնի ապացուցվում է, որ այդ տեղափոխութեան ընկերութիւնը նոյն իսկ Standard-oil-ընկերութիւնն է: Այդ Swart fellows-ները *), ինչպէս անուանեց Շտանդարդի գործիչներին ժողովի նախագահ Վանդերբիլդը,—այն նպատակով են ստեղծել մի ամբողջ ընկերութիւն, որ խրատուլակ լինի նա երկաթուղիների համար և որով կարողանան էժանագին բեռնակրութեան վարձեր ձեռք բերելու: Այսպէս երկաթուղիները խեղկատակ ծուղակի մէջն են ընկնում: Սիմոն Սաէրն, մեղադրիչ փաստաբանը, շատ իրաւացի նկատում է թէ՝ «այդ այդպէս ասած—տեղափոխութեան ընկերութեան ամբողջ գործը այն է եղել որ երկաթուղիների զրպանից փողերը տեղափոխէ Standard-oil-ընկերութեան զրպանը...»

Այս տեսակ նենգուպատիր և խորամանկ խաղերից յետոյ, Standard-oil-ընկերութիւնը սկսում է բիրտ ու բռնական յարձակումներ երկաթուղիների վրա: Սրանց արգելում են ընդունել ուրիշ նաւթանցքերից նաւթը և բեռնակրել այն գործարաններն, որոնք իրան՝ Standard-ին չէին պատկանում: Եւ այդ հրամանը չը կատարել չէին կարող, որովհետև խիստ հսկողութեան էին ենթարկված և վայ այն երկաթուղուն, որը ձգտէր մինչև անգամ գաղտնի մի որ և է ծառայութիւն ցոյց տալ այս ընթացքում նաւթային այլ գործողներին: Աւելի ապահովելու իր միահեծան դրութիւնը, նա Նիւ-Եօրկ-կենտ. երկաթուղու կէրօսինի ամենայն կառքերը մենավարձում է: Այդ բաւական չէ, նա վարձու է առնում այս վերջինի և Էրիէի երկաթուղիների մերձաւոր ամենայն կայարանական յարմարութիւնները կէրօսինը բարձելու ու դատարկելու համար: Այսուհետև աւելորդ է կարծեմ յարելու թէ՝ այս կապակցութիւններն զարձեալ գաղտնի էին կատարած և թէ՝ հասարակութիւնը չը գիտէր ուստի էին պատկանում այդ ամենայն կառուցումները և յարմարութիւնները. գործը արտաքին կողմից այնպէս էր տնօրինած, որ կարծում էին թէ այդ յարմարութիւններից լիակատար օգուտ կարող էին քաղել և ուրիշ ապրանք ուղարկողները, սակայն իրապէս այս ամեն բաները ծառայում էին միայն և միայն Standard-oil-Company-ին...

Այսպէս մենք տեսանք, որպիսի խղճուկ սկզբից է ծագել ու աճել այդ մենավաճառութիւնը, որը այժմ իր ձեռին ունի նաւթային ամբողջ արդիւնաբերութիւնը և նրա տարածումն: Standard-oil-ընկերութեանն են պատկանում նաւթային գաւառի նաւթանցքերը, այդ գաւառներից սկսած մինչև արեւելեան նաւահանգիստները տանող երկաթուղիները նրան են միայն ծառայում: Նրա ձեռքի տակն են ամեն գործարանները—բայց ոչ՝ ճիշտ լինելու համար ասինք—գործարանների ամբողջ թվի 95%-ը: Այդ մի քանի անկախ գործարանների բնաջինջ անելը նա արժան չէ համարում մի որ և է աշխատանքի. սրանք վնաս տալ չեն կարող նրան, իսկ գործին անտեղեակ եղողների վրա լաւ ազդեցութիւն կարող է ունենալ, վասն զի՝ մատնացոյց անելով այս անկախութիւնը՝ նա համարձակ կարող է ասել թէ՝ ինչպէս տեսանք, ինչպէս ասեցինք, ինչպէս գրեցինք, ինչպէս գրեցինք, ինչպէս գր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայ դպրոցական տարուայ սկզբից Շամքոռեցւոց եկեղեցւոյ ծխական դպրոցը ժամանակաւորապէս տեղափոխված է պ. Ց. Տէր Ղազարեանի տանը Հաւլաբարի հրապարակի մօտ՝ Արխանգելսկի փողոցի վրայ № 10։ Աշակերտների ընդունելութիւնը կը տեւի մինչև ամսոյս վերջը։

Ուս. դպրոցի՝ Գ. Մատինեանց

1—5

ՏՈՒՐԲԻՆՆԵՐ

Գերազանց կազմուածքեան,
մեծ աջողութեամբ
գործադրվում են ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
առաջարկում է
Ա. ԿՈՒՆԵՐՏ
Լէբտաու, Դրէզդենում
Löbtau-Dresden.
Որոնում են հիմնաւոր ագէնտներ։

3—3 (1)

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.

37—50

ОТДАЕТСЯ одна чистая КОМНАТА съ мебелью, самоваромъ, прислугою и отопленіемъ. Мало-Орбеліановская улица, домъ Якова Дандурова № 9.

ՏՐՎՈՒՄ Է վարձով մի մաքուր ՍԵՆՆԱԿ, մէբելով, սամովարով, ծառայով և վառելիքով, Փոքր-Օրբելեան փողոցի վրա, տուն Յակոբ Դանդուրովի № 9.

8—8

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ ցանկանում է ԴԱՍԵՐ ունենալ ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ դասընթացքի ԲՈԼՈՐ առարկաներից կամ ԿՕՐԵԿՏՈՒՐԱԿԱՆ աշխատանք ուսաց լեզուի։ Հասցէն, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ։

7—10

ՊԱՍՏԱՌ (օբոյ) ՏԱՐՆՕՊՕԼ եղբայրների գործարանական **ՊԱՀԵՍՏԻ** մէջ։

Լօրիս-Մէլիքովսկայա փողոց, տ. Զուբալովի, հոգևոր սեմինարիայի հանդէպ։

Ստացված է մեծ քանակութեամբ **ՊԱՍՏԱՌ** (օբոյ) 12 կոպէկից մինչև 5 րուբլ ՐՈՒԼՕ։

Քանակութեամբ գնողներին ԶԻՋՈՒՄՆ կը լինի։

24—25

ՐԷՅՕԼԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ, Միխայլովսկի փողոցի վրա, տուն Գուրգէնբէկովի № 81, շարունակ ընդունում է աշակերտներին։

5—10 (1)

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։

Միակ գործակալ **ԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ**։ Նոյն տեսակ ձեռագրերքանակութեամբ ամեն ձևի 25% ուրիշ տեղ։ Կան թուղթ, տետրակներ, զմուռ, մատիտներ, քարեգրիչներ, պենալ, գրչակոթ, քսակներ, մակրատներ, խալիչա-մահճակալ, վերհամար իրեր, գօներ, մատուցարաններ, բրիտանական մետալից իրեր, լապտերներ, գդալներ, բաժակներ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօակալներ, երկաթէ թելերից, ձիու համար։ Մակենտօշներ։ Բժշկական թուղթ վատերկլօզետի համար և այլն և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։

43—100

ՄԻ ՀԱՅ ՎՈՐԴՈՒՀԻ ընդունում է ԳԻՇԵՐՕԹԻԿ աշակերտներ և աշակերտուհիներ իր ընտանիքում։ Պայմանների մասին դիմել „Մշակի“ խմբագրատանը։

4—4



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.		ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Բաթում. .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի.	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Ռիոն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ . .	6— 8	6—11 երեկ.	Գօրի . . .	10—56	11— „
Միխայլօվո.	6—23	6—33	Միխայլօվո.	12—26	12—46
Գօրի . . .	7—53	8— 2	Սուրամ . .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Ռիոն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի.	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում. .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ և ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Սուրամ. . .	—	1—38 գիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլօվո.	1—50	2— 5	Գօրի. . . .	6—30 երեկ.	6—41
Գօրի. . . .	4— 6	4—30	Միխայլօվո.	8—41	8—56
Թիֆլիս. . .	8—առաւ.	—	Սուրամ. . .	9— 8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ և ՓՕԹԻԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Փօթի. . . .	—	8—45 առ.	Սամտրեդի.	—	7—30 երեկ.
Սամտրեդի.	11—39 առ.	—	Փօթի. . . .	10—24 երեկ.	—

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՋԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, գանագան աթոռներ 35 բուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Զեմոդաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակմոյաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սուլիաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ութօներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., գանագան մետալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի գդալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի գդալներ ֆրաժէի, մելխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ գանագան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրօններ րէվոլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, գանագան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. ԹԷՑ Պօյօվ եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՑՆԴԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապոն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտերէյի գանագան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական գամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

46—100



ԱԼԷՔՍԱՆԴՐ ՇԱԴԻՆՕՎԻ

ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Դվորցովայա փողոց, Արծրունու Գալլերէյում

ՍՏԱՑՎԱԾ են մեծ քանակութեամբ ամեն տեսակ կանանց և տղամարդկանց **ԿՕՇԻԿՆԵՐ**։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով։

Тифлисъ, магазинъ обуви Шадинова, Дворцовая ул.

6—6

ՍՏԱՄՈՔՍԱՑԻՆ ՅԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ“

Այդ գինին շատ դուրեկան համ ունի, 25 տարի շարունակ գործ է ածվում հետևեալ դիպվածներում. ԱԽՈՐԺԱԿԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԵԱՆ, ՍՏԱՄՈՔՍԱՑԻՆ ՅԱՒԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ժամանակ։

Պէպսին „Բուդօ“ ճանաչված է Փարիզի բժշկական Ակադեմիայից և արժանացաւ առաջին մեդալների ՓԱՐԻԶԻ աշխարհանդիսում 1867 թ. ՎԻԵՆՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 թ. և ՓԱՐԻԶԻ 1878 թ.։

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Գլխաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան դեղատան ապրանքների վաճառման։

Դէպօ Շահ-Պարոնեանցի, Գրիվնակի և այլ դեղատներում։

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԹԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏ Ի ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

48—100

Дозволено цензурою, Тифлисъ, 19 Сентября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.